ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ N 01

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի ԹԻՎ 1 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 19-ի թիվ 1 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.Վայք համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին:
3.ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում տեղական տուրքերի և վճարների 2022 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
5.Վայք համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
6.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների համար համայնքային ծառայության հավելավճար սահմանելու մասին;
7.Վայք համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները վերանվանելու, հասցեները սահմանելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունները հաստատելու մասին:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Շուշանիկ Ասլանյան
Հայկ Ավագյան

Անուշ Արամյան
Սիմոն Բաբայան
Լևոն Բաղալյան
Արտավազդ Խաչատրյան
Սուսաննա Կոստանյան
Մխիթար Մաթևոսյան
Հրաչիկ Մանուչարյան
Եվա Մովսիսյան
Համբարձում Ջանոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
Շ. Ազատյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ N 02-Ն

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Վայք համայնքի 2022թ. բյուջեն՝

   ա) եկամուտների գծով՝ 704.246.0 հազար դրամ,

   բ) ծախսերի գծով՝ 855.000.0 հազար դրամ,

   գ) հավելուրդը / դեֆիցիտը (պակասուրդը)՝ 150.754.0 հազար դրամ:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը) համաձայն հատված 4-ի:

6. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հատված 5-ի:

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

8. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝
ա)թույլատրել համայնքի ղեկավարին՝ կատարելու բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված գումարի 15% չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,
բ)սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբաշխումների գումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար հաստատված ընդհանուր գումարի 15 %-ը:
9. 2022թ. Վայք համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի մնացորդը կազմել է 102.235.973 դրամ, իսկ ֆոնդային բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել է 48.518.048,40 դրամ:
2022թ. -ին Վայք համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը կազմում է 80.000.073 դրամ:
Ֆոնդային բյուջեի 128.518.121,40 դրամ գումարը 2022թ. ընթացքում ուղղել կապիտալ ծախսերի և սուբվենցիոն ծրագրերի իրականացմանը՝ որպես համայնքի ներդրում:
Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել է 22.235.900 դրամ, որը կուղղվի համայնքապետարանի ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը:
10.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանը հաջորդող 10-րդ օրը և տարածվում է 2022թ. հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերություններում, բացառությամբ ավագանու թիվ 03-Ն որոշմանը, որը ուժի մեջ է մտնում փետրվարի 22-ից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Շուշանիկ Ասլանյան
Հայկ Ավագյան
Անուշ Արամյան
Սիմոն Բաբայան
Լևոն Բադալյան
Արտավազդ Խաչատրյան
Սուսաննա Կոստանյան
Մխիթար Մաթևոսյան
Հրաչիկ Մանուչարյան
Եվա Մովսիսյան
Համբարձում Ջանոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ N 03-Ն

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ,ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերի պահանջներով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Վայքի համայնքապետարանի կառուցվածքը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ սույն որոշման 1-ին կետով հաստատված հաստիքացուցակին համապատասխան համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու առաջարկությամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի փետրվարի 28-ից, քաղաքական, հայեցողական և վարչական պաշտոնների մասով՝ հրապարակման օրվանից, իսկ աշխատակազմի՝ համայնքային ծառայության պաշտոնների մասով՝ ուժի մեջ կմտնի Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Շուշանիկ Ասլանյան
Հայկ Ավագյան
Անուշ Արամյան
Սիմոն Բաբայան
Լևոն Բադալյան

Արտավազդ Խաչատրյան
Սուսաննա Կոստանյան
Մխիթար Մաթևոսյան
Հրաչիկ Մանուչարյան
Եվա Մովսիսյան
Համբարձում Ջանոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

Հավելված
Վայք համայնքի ավագանու
2022թ. Հունվարի 19-ի թիվ 03-Ն որոշման

Վայքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը.
Աշխատակիցների թիվը՝ 128

ՀՀ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Գումարը	Համայնքային ծառայության պաշտոնի ծածկագիրը
	Քաղաքական պաշտոններ				
1	Համայնքի ղեկավար	1	440 000	440 000	
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	358 000	358 000	
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	280 000	280 000	
4	Համայնքի ղեկավարի տեղակալ /աշխարհազոր/	1	220 000	220 000	
	Ընդամենը	4		1 298 000	
	Վարչական պաշտոններ				
1	Վարչական ղեկավար Ազատեկ	1	170 000	170 000	
2	Վարչական ղեկավար Արին	1	170 000	170 000	
3	Վարչական ղեկավար Փոռ	1	170 000	170 000	
4	Վարչական ղեկավար Ջեղեա	1	170 000	170 000	
5	Վարչական ղեկավար Ջառիթափ	1	200 000	200 000	
6	Վարչական ղեկավար Գոմք	1	180 000	180 000	
7	Վարչական ղեկավար Մարտիրոս	1	180 000	180 000	
8	Վարչական ղեկավար Սերս	1	170 000	170 000	
9	Վարչական ղեկավար Բարձրունի	1	180 000	180 000	
10	Վարչական ղեկավար Խնձորուտ	1	180 000	180 000	
11	Վարչական ղեկավար Նոր Ազնաբերդ	1	170 000	170 000	
12	Վարչական ղեկավար Սարավան	1	180 000	180 000	
13	Վարչական ղեկավար Արտավան	1	180 000	180 000	
14	Վարչական ղեկավար Հերհեր	1	180 000	180 000	
15	Վարչական ղեկավար Կարմրաշեն	1	170 000	170 000	
	Ընդամենը	15		2 650 000	
	Հայեցողական պաշտոններ				
1	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	220 000	220 000	
2	Համայնքի ղեկավարի օգնական	1	180 000	180 000	
3	Համայնքի ղեկավարի տեղակալի օգնական	1	170 000	170 000	
4	Մամուլի քարտուղար	1	170 000	170 000	
	Ընդամենը	4		740 000	
	Համայնքային ծառայողներ-Աշխատակազմ				
1	Աշխատակազմի քարտուղար	1	335 000	335 000	1.2-1
2	Գլխավոր մասնագետ-իրավաբան	1	270 000	270 000	2.3-1
3	Գլխավոր մասնագետ /ՔԿԱԳ/	1	166 600	166 600	2.3-2
4	Առաջատար մասնագետ-իրավաբան	1	210 000	210 000	3.1-1
5	Առաջատար մասնագետ /գործավար/	1	210 000	210 000	3.1-2

6	Երկրորդ կարգի մասնագետ (Զառիթափ բնակավայրի համար)	1	130 000	130 000	3.3-1
7	Երկրորդ կարգի մասնագետ (բնակավայրի օպերատոր)	15	130 000	1 950 000	3.3.-2, 3.3-3, 3.3-4, 3.3-5, 3.3 6, 3.3-7, 3.3-8, 3.3-9, 3.3-10, 3.3-11, 3.3-12
8	Առաջին կարգի մասնագետ-զորահավաքային առաջադրանքների կատարման և կազմակերպման գծով	1	150 000	150 000	3.2-1
9	Առաջին կարգի մասնագետ/բարեվարքության հարցերով կազմակերպիչ/	1	150 000	150 000	3.2-2
	Ընդամենը	**23**		**3 571 600**	
	Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին				
1	Բաժնի պետ	1	300 000	300 000	2.1-1
2	Բաժնի պետի տեղակալ-ֆինանսիստ	1	280 000	280 000	2.2-1
3	Գլխավոր մասնագետ-հաշվապահ	1	270 000	270 000	2.3-3
4	Գլխավոր մասնագետ-գնումների գծով	1	270 000	270 000	2.3-4
5	Առաջատար մասնագետ	5	210 000	1 050 000	3.1-3, 3.1-4, 3.1-5, 3.1-6, 3.1-7
	Ընդամենը	**9**		**2 170 000**	
	Քաղաքաշինության, հողաշինության, երկրաբանության կոմունալ տնտեսության, տրանսպորտի բաժին				
1	Բաժնի պետ	1	300 000	300 000	2.1-2
2	Գլխավոր մասնագետ-ճարտարապետ	1	270 000	270 000	2.3-5
3	Առաջատար մասնագետ/հողաշինարար/	1	210 000	210 000	3.1-8
4	Առաջին կարգի մասնագետ	2	150 000	300 000	3.2-3, 3.2-4
	Ընդամենը	**5**		**1 080 000**	
	Գյուղատնտեսության և բնապահպանության բաժին				
1	Բաժնի պետ	1	300 000	300 000	2.1-3
2	Գլխավոր մասնագետ-գյուղատնտես	1	270 000	270 000	2.3-6
3	Առաջատար մասնագետ	1	210 000	210 000	3.1-9
4	Առաջին կարգի մասնագետ	2	150 000	300 000	3.2-5, 3.2-6
	Ընդամենը	**5**		**1 080 000**	
	Զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին				

1	Բաժնի պետ	1	300 000	300 000	2.1-4
2	Գլխավոր մասնագետ /սոցիալական աշխատող/	1	270 000	270 000	2.3-7
3	Առաջատար մասնագետ- Տնտեսական զարգացման հարցերի գծով պատասխանատու	1	210 000	210 000	3.1-10
4	Առաջին կարգի մասնագետ	2	150 000	300 000	3.2-7, 3.2-8
	Ընդամենը	5		1 080 000	
	Ներքին աուդիտի բաժին				
1	Բաժնի պետ	1	300 000	300 000	2.1-5
	Ընդամենը	1		300 000	
	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝ համայնքային ծառայողներ	48		9 281 600	
	Քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմ				
1	Անասնաբույժ /պայմանագրային/	12	130 000	1 560 000	
2	Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հետ առնչվող հարցերի համակարգող	1	180 000	180 000	
3	Գյուղական բնակավայրերի մշակութային, սպորտի և երտասարդության հետ առնչվող հարցերի կազմակերպիչ	7	94 000	658 000	
	Ընդամենը	20		2 398 000	
	Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ				
	Վարորդ (համայնքի ղեկավարի)	1	200 000	200 000	
4	Վարորդ (համայնքի ղեկավարի տեղակալների)	1	150 000	150 000	
5	Հավաքարար (համայնքապետարանի աշխատակազմի)	2	100 000	200 000	
6	Հավաքարար (նախատեսվում է գյուղական բնակավայրերում)	7,5	94 000	705 000	
7	Գործավար	1	150 000	150 000	
8	Պահակ (կենտրոն բնակավայրի համայնքապետարանի վարչական շենքի)	2	100 000	200 000	
9	Բանվոր-ջրակարգավորող (նախատեսվում է գյուղական բնակավայրերում)	7,5	94 000	705 000	
	Ընդամենը	22		2 310 000	
	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ	113,0		18 677 600,0	

Աշխատակազմի քարտուղար *Շ. Ազատյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ N 04-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի ու <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ հոդվածների պահանջներով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում տեղական տուրքերի և վճարների 2022 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Շուշանիկ Ասլանյան
Հայկ Ավագյան
Անուշ Արամյան
Սիմոն Բաբայան
Լևոն Բադալյան
Արտավազդ Խաչատրյան
Սուսաննա Կոստանյան

Մխիթար Մաթևոսյան
Հրաչիկ Մանուչարյան
Եվա Մովսիսյան
Համբարձում Ջանոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ N 05-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Վայք համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

1) <<Վայք համայնքի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 1 հավելվածի:

2)<<Վայք համայնքի թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 2 հավելվածի:

3)<<Զառիթափի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 3 հավելվածի:

4)<< Վայքի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 4 հավելվածի:

5)<< Խաչատուր Ներսիսյանի անվան արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 5 հավելվածի:

6)<< Վայք համայնքի մանկապատանեական մարզադպրոց>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 6 հավելվածի:

7)<<Գյուղատնտեսություն >> ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 7 հավելվածի:

8)<<Վայքի բարեկարգում >> ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 8 հավելվածի:

9)<< Վայք համայնքի մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 9 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Կողմ 11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Շուշանիկ Ասլանյան
Հայկ Ավագյան
Անուշ Արամյան
Սիմոն Բաբայան
Լևոն Բադալյան
Արտավազդ Խաչատրյան
Սուսաննա Կոստանյան
Մխիթար Մաթևոսյան
Հրաչիկ Մանուչարյան
Եվա Մովսիսյան
Համբարձում Ջանոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ N 06- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ կետերի պահանջներով համայնքի ավագանին որոշում է

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների համայնք
ային ծառայության բնագավառում ունեցած երկար տարիների /
առնվազն հինգ տարի և ավել
/աշխատանքային ստաժի համար սահմանել հավելավճար, այդ թվում՝ 5-ից մինչև 9-
ը տարվա համայնքային ծառայության ստաժի դեպքում հաստիքի պաշտոնային դրու
յքաչափի 5%-ի չափով, իսկ 9տարի և ավել համայնքային ծառայության
ստաժի դեպքում՝ հաստիքի պաշտոնային դրույքաչափի 10%-ի չափով :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան
հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2022 թվականի փետրվարի 21-ից
հետո առաջացած աշխատանքային հարաբերությունների վրա:

Կողմ -3 Դեմ -8 Ձեռնպահ -0

Անուշ Արամյան
Սիմոն Բաբայան
Արտավազդ Խաչատրյան

Շուշանիկ Ասլանյան
Հայկ Ավագյան
Լևոն Բադալյան
Սուսաննա Կոստանյան
Մխիթար Մաթևոսյան

Հրաչիկ Մանուչարյան
Եվա Մովսիսյան
Համբարձում Ջանոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ N 07-Լ

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ, ՀԱՍՑԵՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 515-Ն որոշումը և այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածի 2.9-րդ մասի 1-ին կետի համաձայն համայնքների խոշորացման արդյունքում միավորվել են Վայոց ձորի մարզի Վայք, Զառիթափ համայնքները և Ջերմուկ համայնքի Հերհեր և Կարմրաշենբնակավայրերը՝ ընդգրկվելով Վայք խոշորացված համայնքի կազմում՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայքի քաղաքային թիվ 1 մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ՀՈԱԿ) վերանվանել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայք համայնքի թիվ 1 մանկապարտեզ>>ՀՈԱԿ:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի<<Վայքի քաղաքային թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ը վերանվանել <<Վայք համայնքի թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ:

3. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրի «Զառիթափի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը վերանվանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքիԶառիթափ բնակավայրի«Զառիթափի մանկապարտեզ» ՀՈԱԿ:

4. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայքի

Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն>>ՀՈԱԿ:

5. .Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայքի մանկական արվեստի դպրոց>>ՀՈԱԿ-ը վերանվանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Խաչատուր Ներսիսյանի անվան արվեստի դպրոց>> ՀՈԱԿ:

6.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայք քաղաքի մանկապատանեական մարզադպրոց>>ՀՈԱԿ-ը վերանվանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի << Վայք համայնքի մանկապատանեական մարզադպրոց >> ՀՈԱԿ:

7. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի «Զառիթափի բարեկարգում» ՀՈԱԿ-ը վերանվանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի «Գյուղատնտեսություն» ՀՈԱԿ:

8. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի «Վայք համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ-ը վերանվանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի «Վայքի բարեկարգում» ՀՈԱԿ:

9. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայքի քաղաքային համայնքի մշակույթի տուն>>ՀՈԱԿ-ը վերանվանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայք համայնքի մշակույթի տուն>> ՀՈԱԿ:

10. Հաստատել և սահմանել.

1) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայք համայնքի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ինոր խմբագրությամբ կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի և գտնվելու վայրը(այսուհետ՝ իրավաբանական հասցեն)՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, քաղաք Վայք Ա. Թովմասյան փողոց 4:

2) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայք համայնքի թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ինոր խմբագրությամբ կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի և գտնվելու վայրըՀայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, քաղաք Վայք Ալավերդյան 54:

3) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Զառիթափի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ինոր խմբագրությամբ կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի և գտնվելու վայրըՀայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Զառիթափ բնակավայր 7 փողոց 14:

4) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայքի մանկապատանեական ստեղծագործության կենտրոնը>> ՀՈԱԿ-ինոր խմբագրությամբ կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի և գտնվելու վայրըՀայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, քաղաք Վայք Ալավերդյան 15:

5) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Խաչատուր Ներսիսյանի անվան արվեստի դպրոց >> ՀՈԱԿ-ինոր խմբագրությամբ կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի և գտնվելու վայրըՀայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, քաղաք Վայք Ա. Թովմասյնա փողոց 1:

6) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայք համայնքի մանկապատանեական մարզադպրոց >> ՀՈԱԿ-ինոր խմբագրությամբ կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի և գտնվելու վայրըՀայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ, Վայք համայնքի, Վայք քաղաքի Զարենցի փողոց 6:

7) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Գյուղատնտեսություն >> ՀՈԱԿ-ինոր խմբագրությամբ կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի և գտնվելու վայրըՀայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, բնակավայր Զառիթափ 3 փողոց 15:

8) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայքի բարեկարգում >> ՀՈԱԿ-ինոր խմբագրությամբ կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի և գտնվելու վայրըՀայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, քաղաք Վայք Շահումյան 18:

9) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայք համայնքի մշակույթի տուն>>> ՀՈԱԿ-ինոր խմբագրությամբ կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի և գտնվելու վայրըՀայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, քաղաք Վայք Ա. Թովմասյան փողոց 1:

11. Սույն որոշման ընդունմամբ ուժը կորցրած ճանաչել Վայք քաղաքային համայնքի ավագանու 20.01.2010թ. թիվ 4 որոշումը<<Վայքի քաղաքային թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին», Վայքքաղաքային համայնքի ավագանու 20.01.2010թ. թիվ 5 որոշումը<<Վայքի քաղաքային թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին, Զառիթափ համայնքի ավագանու 18.02.2010թ. թիվ 2 որոշումը «Զառիթափի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին, Վայքքաղաքային համայնքի ավագանու 12.12.2011թ. թիվ 51 որոշումը <<Վայքի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն>> ՀՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին,Վայք քաղաքային համայնքի ավագանու 12.12.2011թ. թիվ 48 որոշումը <<Վայքի մանկական արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին, Վայք քաղաքային համայնքի ավագանու 12.12.2011թ. թիվ 50 որոշումը <<Վայք քաղաքի մանկապատանեական մարզադպրոց>> ՀՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին, Զառիթափ համայնքի ավագանու 19.01.2017թ. թիվ 7 որոշումը «Զառիթափի բարեկարգում» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին, Վայք համայնքի ավագանու 09.12.2013թ. թիվ 49 որոշումը «Վայք համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին, Վայք համայնքի ավագանու 26.10.2018թ. թիվ 66 որոշումը <<Վայքի քաղաքային համայնքի մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին:

12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Շուշանիկ Ասլանյան
Հայկ Ավագյան
Անուշ Արամյան
Սիմոն Բաբայան
Լևոն Բաղալյան
Արտավազդ Խաչատրյան
Սուսաննա Կոստանյան

Մխիթար Մաթևոսյան
Հրաչիկ Մանուչարյան
Եվա Մովսիսյան
Համբարձում Ջանոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
Շմավոն Ազատյան